ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



1-2
2009

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵ՛ՆԱՑԻ

ԳԻՏԱԿԱՆ, ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԳԻՏԱԿԱՆ, ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հանդեսի հիմնադիր և հրատարակիչ Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան:

*Գլխավոր խմբագիր՝*
Հասմիկ Կարագուլյան

*Խմբագրական խորհուրդ*
Արթուր Աղաբաբյան
Նելլի Անանյան
Ալեքսանդր Բագդոև
Բակուր Գալստյան
Դավիթ Թորոսյան
Արշակ Մադոյան
Մարինե Միկիլյան
Անուշավան Վանցյան
Սվետլանա Վարդանյան

*Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝*
Հասմիկ Հովսեփյանի

2009, «Մովսես Խորենացի»

1-2
2009

ԵՐԵՎԱՆ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


| | | |
|---|---|---|
| | **ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ** | |
| Բակուր Գալստյան | ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ (Նվիրվում է Վ. Սարոյանի 100 ամյակին) | 4 |
| Համիկ Կարագուլյան | ԿԵԱՆՔՍ ՎԷՊ ՄԸՆ Է... | 7 |
| | ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԱՐՁԱԿԸ | 16 |
| Սասուն Աբազյան | ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ | 22 |
| | **ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** | |
| Նաիրա Կիլիչյան | ԱՐՋԱՊԱՐԸ ՀԱՅ ԵՎ ՀՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ | 30 |
| Վերժինե Սվազլյան | ԼՌՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՈՒՄ Է ԲԱՐԲԱՌԵԼ... | 37 |
| Քնարիկ Ավագյան | ՊԱԿ-ի ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՌՆԱԴԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ(1928-1937 թթ.) | 39 |
| Թամար Զաքարյան | ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ըստ 1980-2007թթ. էթնոսոցիոլոգիական հետազոտությունների) | 52 |
| Համիկ Մարգարյան | ՆՅՈՒԹԵՐ ՆԻԺ ԳՅՈՒՂԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | 57 |
| Սվետլանա Վարդանյան | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1818 - 1861) | 63 |
| Էսթեր Խեմչյան | ԿԱՅՈՒՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ | 69 |
| Համիկ Գալստյան | ՍՊԱՍՈՒՄ (Նվիրվում է Մինասի հիշատակին) | 77 |
| Հրաչյա Ասմարյան | ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԼՈՒՄԱՅ» ԱՄՍԱԳՐՈՒՄ | 79 |
| | **ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | |
| Լևոն Հարությունյան<br>Դավիթ Թորոսյան | ՃԱՔԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ, ԼՈՒՍՆԱՁԵՎ ԱՆՀԱՄԱՍԵՌ ՄԱՐՄՆԻ ՄԻ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ | 84 |
| Վերժինե Նաջարյան | ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏ | 92 |



Մովսես Խորենացի գիտական, պատմաբանասիրական, բնագիտական պարբերականը գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում: Գրանցման վկայական 01Մ 000024:
Խմբագրության հասցեն Երևան - 375009, Տերյան 105, հեռ. 52-05-41:
Տպագրված է «Սալի Դիզայն» ՍՊԸ-ում Տպաքանակ 100:

**МОВСЕС ХОРЕНАЦИ**
Научный, историко-филологический, естествоведческий журнал.
Адрес редакции: Армения, г. Ереван - 375009, Терян 105, тел. 52-05-41.

**Movses Khorenatsi**
Scientific, historical philological, natural journal.
Armenia. Yerevan - 375009, Teryan 105, tel. 52-05-41.

## ОГЛАВЛЕНИЕ


### ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ И ПЕДАГОГИКА

Бакур Галстян ЭКЗИСТЕНЦИАЛИСТ ВИЛЬЯМ САРОЯН /Посвящается 100 летию В. Сарояна/ 4
Асмик Карагулян МОЯ ЖИЗНЬ -РОМАН 7
ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ И ФРАНЦУЗСКАЯ ПРОЗА 16
Сасун Абазян ПРОБЛЕМА ВОЕННОГО ОБУЧЕНИЯ НОВОБРАНЦЕВ 22

### ЭТНОГРАФИЯ И ИСТОРИЯ

Наира Киличян "МЕДВЕЖИЙ ТАНЕЦ" В АРМЯНСКОЙ И ГРЕЧЕСКОЙ КУЛЬТУРАХ 30
Вержине Свазлян ОБРЕЧЕННАЯ К МОЛЧАНИЮ ИСТОРИЯ ЗАГОВОРИЛА... 37
Кнарик Авакян ДОКУМЕНТЫ КГБ О РЕСПРЕССИРОВАННЫХ СВЯЩЕННОСЛУЖИТЕЛЯХ КОТОЛИЧЕСКОЙ ЦЕРКОВИ АРМЕНИИ(1928-1937) 39
Тамара Закарян ИЗМЕНЕНИЯ В СТРУКТУРЕ И ЧИСЛЕННОСТИ СЕЛЬСКОЙ СЕМЬИ ТАВУША В ПЕРЕХОДНЫЙ ПЕРИОД (ПО РЕЗУЛЬТАТАМ ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ 1980-2007гг.) 52
Асмик Маркарян МАТЕРИАЛЫ ИЗ ЭТНОГРАФИИ СЕЛА НИЖ 57
Светлана Варданян НАРОДНЫЙ ФОЛЬКЛОР В ОЦЕНКЕ ГЕВОРКА АХВЕРДЯНА 63
Эстер Хемчян УСТОЙЧИВЫЕ ФОРМУЛЫ В ТАВУШСКИХ СКАЗКАХ 69
Асмик Галстян ОЖИДАНИЕ (освящается памяти Минаса) 77
Грачя Асмарян ОТОБРАЖЕНИЕ ИТАЛЬЯНСКОГО ОСВОБОДИТЕЛЬНОГ ДВИЖЕНИЯ В ЖУРНАЛЕ „ЛУМА„ 79

### ЕСТЕСТВОЗНАНИЕ

Левон Арутюнян, Давид Торосян ПЛОСКАЯ НЕОДНОРОДНАЯ ЗАДАЧА ДЛЯ ЛУНОЧЕК С ТРЕЩИНАМИ 84

Вержине Наджарян ЧИСТОТА ОКРУЖАЮЩЕЙ ПРИ-РОДНОЙ СРЕДЫ КАК ОБЪЕКТ НАРОДНОХОЗЯЙСТВЕННОГО ПЛАНИРОВАНИЯ И УПРАВЛЕНИЯ 92


## CONTECT


### HISTORY AND CRITISISM OF LITERATURE

Bakur Galstyan EXISTENTISCIENSE WILIAM SAROYAN 4
Hasmik Karagulyan MY LIFE IS NOVEL 7
EXISTENTIALIZM AND FRENC ARMENIAN 16
Sasun Abazyan PIORETI A MATTE OF THE MILITARY STUDY OF THE RECRUITS 22

### HISTORY OF NATION

Naira Kilichyan THE BEAR DANSE IN ARMENIAN AND GREEK CULTUR 30
Verjine Svazlyan THE HISTORY, DOOMED TO SILANSE, BEGINS TO SPEAK... 37
Knarik Avakyan THE KGB DOCUMENTS ABOUT THE REPRESSED CLERGYMEN OF THE CATHOLIC CHURCH IN ARMENIA 39
Tamar Zakaryan THE CHANGES IN STRCTURE AND COMPOSITON OF RURAL FAMILY IN TAVUSH REGION AFTER INDEPENDENSR OF ARMENIA(based on ethnosociological surveys of 1980-s-2007) 52
Hasmik Margaryan MATERIALS ON THE ETHNOGRAPHY OF THE VILLAGE OF NIDJ 57
Svetlana Vardanian THE FOLKLORE BY VALUATION OF GEVORG AKHVERDYAN 63
Ester Khemchyan STABLE FORMULAS IN TAVUSH TALES 69
Hasmik Galstyan WAIT 77
Hrathia Asmarian THE REFALUTION ITALIAN NATIONAL-LIBERITION MOVEMENT IN "LUMA" PERIODIKAL 79

### NATURAL SCIENCE

Levon Haroutyunyan, David Torosyan A PLANE CONTACT FOR A COMPOUND DOMAIN WITH ASIMNETRIC CRACKS COMING OUT ON TO THE BOUNDARY OF THE MATERIALS 84
Verjine Nagaryan THE ENVIRONMENT AS THE OBJECT OF ARGICULTURAL PLANNING AND BOARDING AND HOW TO HEEP IT CLEON 92

## ՍՊԱՍՈՒՄ
(Նվիրվում է Մինասի հիշատակին)

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԱԻ

Զարմանալի ենք մենք՝ հայերս՝ մշակույթ սիրող, կառուցող ու արարող: Ստեղծում ենք անմահ արժեքներ՝ սիրով ու նվիրումով: Եվ թողնում ենք դրանք բախտի քմահաճույքներին, բնության քիրտ ու վայրագ տարերքներին դեմ հանդիման: Չուզենալով կամ գուցե չկարողանալո՞վ ենք դա անում... Եվ այդ հակասության խաչմերուկում խամրում են մեր ազգային նկարագիրը հիշեցնող արժեքները:

Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղը մեզ հայտնի է դեռ 10-րդ դարից՝ իր Մարմաշեն եկեղեցական համալիրով: Սակայն այն ավելի արժեքավոր կլիներ, եթե չլիներ ավերիչ երկրաշարժը, որի թաքը դիպավ նաև գյուղի մշակույթի պալատին: Այստեղ իր հանգրվանն էր գտել Մինասի հանճարեղ վրձնի գլուխգործոցներից մեկը:
Աստծո կամոք շինությունից կանգուն մնաց միայն որմնանկարի պատը: Այն զբաղեցնում է 18 քառ. մետր մակերես: Արդեն 20 տարի է, ինչ որմնանկարը թիթեղապատ է և «արևի երես չի տեսել»: Այն ունի արարման իր պատմությունը:

Վահրամաբերդցի Ղարիբ Հարությունյանը պատմում է, որ 1973 թ[121]. Վահրամաբերդի մշակույթի պալատը հանձնվել է շահագործման: Սակայն գյուղապետ Գևորգ Գրիգորյանը գտել է, որ այն իր լիարժեք տեսքը կստանա միայն արվեստի որևէ գործ ունենալու դեպքում: Գյումրեցի նկարիչ Վռամ Նալչաջյանի խորհրդով գյուղապետը մեկնում է Երևան, հրավիրում Մինասին: Ականատեսները պատմում են, թե ինչ սիրով ու նվիրումով է Մինասը ձեռնամուխ եղել այդ գործին:

Մարմաշեն վանքի գույներով նա պատկերել է գյուղի համայնապատկերը, աղբյուրը, որի մոտ կանայք են՝ կժերն ուսերին. նրանցից մեկի գրկում մանուկ է, իսկ մյուսը ամուր բռնել է մոր փեշից:

Նույն Ղարիբ Հարությունյանը պատմում է, որ գնացել է Մինասին այցելության, նայել է նկարին և հարցրել.
- Վարպետ, էս ի՞նչ ես նկարել, մի նորմալ բան չկարողացա՞ր:
Մինասը շուռ է եկել, նայել նրան և, իրեն հատուկ լրջությամբ, պատասխանել.
- Տրակտոր կամ կոմբա՞յն նկարեի: Եթե նկարը հասկացող լինի՝ տասնյակ վեպեր կգրի:

Իսկ ուսուցչուհի Լարիսա Չախոյանը պատմեց. «Երբ Երևանից եկա ամառային արձակուրդս անցկացնելու, այցելեցի Մինասին: Երկար զրուցեցինք: Սուրճ առաջարկեցի, ի պատասխան՝ թան խնդրեց: Որմնանկարը գրեթե ավարտին էր հասցրել: Իմ այն հարցին, թե ինչ է վերնագրելու նկարը, նա պատասխանեց.
- Ապագա բանասեր ես, ի՞նչ կվերնագրեիր:
- «Կարոտ», -պատասխանեցի ես՝ երկար մտորելուց հետո:
- Իսկ եթե «Սպասում» լինի՞,- հնչեց ի պատասխան:
Եվ այդպես էլ չիմացանք՝ կարո՞տ էր, թե՞ սպասում: Գուցե երկուսը միասի՞ն...
- Ամեն անգամ, երբ նայում եմ շուրջ տասնութ տարի բանտարկության մեջ գտնվող

[121] Մինաս Ավետիսյանը կտավը ստեղծել է 1972-1973թթ:

Մինասի որմնանկարին, - շարունակում է ուսուցչուհին, - սիրտս կտոր-կտոր է լինում: Տեսնես զգու՞մ էր Մինասը, որ իր գործն էլ իր նման դժբախտ է լինելու:

Գյուղացիներն այն փրկելու համար դիմել են նախ Շիրակի մարզի ՀԿԿ առաջին քարտուղար Սաշիկ Գրիգորյանին, որը ստանձնել է որմնանկարը վրանով ծածկելու գործը: Այնուհետև Լիտվայից շինօգնության խումբ է եկել՝ նոր մշակույթի պալատ կառուցելու, և որոշվել է այն հիմնովին քանդել՝ նորը կանգնեցնելու համար, սակայն կանխվել է գյուղացիների կողմից:

1990թ. ՀՀՇ անդամ Վանո Սիրադեղյանն այցելում է Վահրամաբերդ, տեսնում է որմնանկարը և արդյունքում վրանը փոխարինվում է թիթեղով:

Եվ գլորվում են տարիները՝ նկարը թողնելով անպաշտպան ու խավարապատ: 2001թ. «Սոցիալական ներդրումների հիմնադրամի» աշխատակիցները խոստացան վերականգնել նկարը: Բայց սա լոկ խոստում էր:

Համայնքի ղեկավարությունը դիմել է նաև նկարչի հարազատներին, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով անարձագանք է մնացել նաև այդ կոչը: Մասնագետներն ասում են, որ մեկ տարի ևս, և վերջնականապես կկորցնենք «Սպասումը»:

Այսօր էլ սպասում է Մինասը, սպասում են դեռ Մինասի հերոսուհիները՝ կարոտով ու սպասումով լի աչքերով:


(Посвящается памяти Минаса)

АСМИК ГАЛСТЯН

РЕЗЮМЕ

Художник Минас - фреску "Ожидание" написал в деревне Ваграмаберд на стене сельского клуба. Сельский клуб вследствии землетресения разрушен. Осталась цела стена со фреской, которая покрыта жестью. В материале представлена история создания и оглавления Фрески.

В настояще время усилия ваграмабердцев для восстановление бесценного художественного произведения пока не дали результатов.



(It is devoted to the memory of Minas)

HASMIK GALSTYAN

SUMMARY

Famous painter Minas was painted his fresca "Waiting" on the wall of the House of culture in village Vahramaberd. The building of the House of culture was ruined during the earthquake. It was saved only the wall with fresca which is still covered with tin.

In this article is presented the story of title and creation of the fresca. The all effords to rebuilt the House of culture and restoration of fresca didn't led to no result.

# ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հիմնադրվել է 1996թ.-ին:

Ռեկտորն է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Սուրենի Աղաբաբյանը:

Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանն իրականացնում է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագիր բակալավրի և մագիստրի մասնագետի որակավորմամբ կադրերի պատրաստման նպատակով:

Բուհը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստացել է.

ա) 1996թ-ին լիցենզիա 4 տարի ժամկետով,

բ) 2000թ-ին լիցենզիա անժամկետ:

*Բուհը ամբողջությամբ հավատարմագրված է (ունի 6 մասնագիտություն, որոնք բոլորն էլ հավատարմագրված են): Շրջանավարտները ստանում են պետական դիպլոմ:*

Համալսարանը 1996թ-ից ծավալելով կրթական գործունեություն, հիմնական կրթական ծրագրերին համապատասխան ընտրել է կրթության առկա, հեռակա ձևեր և ունի հետևյալ ֆակուլտետները.

1. Բանասիրական (հայոց լեզու և գրականություն), տարեկան ուսման վարձը 110.000-180.000 դրամ:
2. Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), տարեկան ուսման վարձը 110.000-180.000 դրամ:
3. Կիրառական մաթեմատիկա (ԷՀՄ և ծրագրավորում, համակարգչային գործ, ծրագրավորողներ անգլերեն լեզվի խորացված ուսուցմամբ), տարեկան ուսման վարձը 110.000-180.000 դրամ:
4. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա (տարրական դասարանների դասվարներ), տարեկան ուսման վարձը 110.000-125.000 դրամ:
5. Համաշխարհային տնտեսագիտություն, տարեկան ուսման վարձը 110.000-180.000 դրամ:
6. Իրավագիտություն, տարեկան ուսման վարձը 110.000-180.000 դրամ:

Համալսարանում սովորող ուսանողների ճնշող մեծամասնությունը Հայաստանից է: Ունի ուսանողներ նաև արտասահմանից (Սիրիա, Վրաստան, Ռուսաստան):

Դասավանդում են 72 դասախոսներ (ակադեմիկոսներ, գիտ. դոկտորներ, գիտ. թեկնածուներ):

Ուսումնական գործընթաց կազմակերպելուց բացի համալսարանում մեծ ուշադրություն է դարձնում նաև դասախոսների գիտական գործունեության իրականացման և գիտական աշխատանքների հրատարակման ուղղությամբ:

Մովսես Խորենացու անվ. համալսարանը Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվ. պետական համալսրանի և ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպել է միջազգային գիտական կոնֆերանս, որի ժամանակ զեկուցվել, ապա նաև հրատարակվել են բուհի դասախոսների գիտական աշխատանքները:

2004թ. համալսարանը ձեռք է բերել սեփական մասնաշենք:

2005թ.բուհը հրավիրվել է մասնակցելու Ֆրանսիա- Ռուսաստան-ԱՄՀ միջազգային համագործակցության ֆորումին:

2005թ. Մովսես Խորենացու անվ. համալսարանը Շվեյցարիայում կազմակերպված ժնևի կոնֆերանսում արժանացել է ոսկե մեդալի:

Բուհում հրատարակվում է .

ա/ «Մովսես Խորենացի» գիտական հանդեսը

բ / «Ուսանողական աշխարհ» թերթը

գ/ «Փյունիկ» ամսաթերթը

1998թ. համալսարանում ստեղծվել է ուսանողական խորհուրդ, որն ակտիվորեն գործում է:

2008թ. փետրվարից բուհում ներդրվել է ուսուցման կրեդիտային համակարգը, որը բխում է Եվրոպական ընդհանուր կրթական դաշտի ստեղծման և Բոլոնիայի գործընթացի պահանջներից: Համալսարանում մշակված են առաջիկա մի քանի տարիների գիտական հիմնական ուղղությունները:

Ի գիտություն հեղինակների

«Մովսես Խորենացի» հանդեսում իրենց հոդվածները կարող են տպագրել բուհերի և այլ կազմակերպությունների դասախոսներն ու գիտաշխատողները: